Հավելված N 1
Սպիտակ համայնքի ավագանու
2020 թվականի օգոստոսի____ թիվ -Ն որոշման

| Տողի NN | Բաժին | Խումբ | Դաս | Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները | | Ընդամենը | Ավելացում | Պակասեցում | Գործադրի և օրենադիր մարմիններ | Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ | Նախադպրոցական կրթություն թիվ-2 մանկ | Պահուստային միջոցներ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | | 6 | 7 | 9 | 10 | 11 | | 13 |
| 2000 | X | X | X | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ | | 0 | 23 006.858 | -16 700.0 | - 6 900,0 | 900.0 | -6 000.0 | 18 306.858 |
| 2111 | 1 | 1 | 1 | Աշխատողների աշխատավարձ և հավելավճար | 4111 | -7 200,0 | 0 | -7 200,0 | -7 200,0 | 0 | | |
| | | | | Հատուկ նպատակային այլ նյութեր | 4269 | 200.0 | 200.0 | | 200.0 | | | |
| | | | | Կենցաղային և հանրայիննննդի նյութեր | 4267 | 100.0 | 100.0 | | 100.0 | | | |
| | | | | Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 4239 | -3 500.0 | | -3 500.0 | -3 500.0 | | | |
| | | | | Կառավարչական ծառայություններ | 4235 | 3 500.0 | 3 500.0 | | 3 500.0 | | | |
| 2161 | 1 | 6 | 1 | Մասնագիտական ծառայություններ | 4241 | 900.0 | 900,0 | | | 900.0 | | |
| 2911 | 9 | 1 | 1 | Ընթացիկ դրամաշնորհներ պետ. և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին | 4637 | -6000.0 | | -6000.0 | | | -6 000.0 | |
| 3112 | 10 | 1 | 2 | Պահուստային ֆոնդ /ֆոնդ.բյուջե/ | 4891 | 5 535.691 | 5 535.691 | | | | | 5 535.691 |
| 3112 | 10 | 1 | 2 | Պահուստային ֆոնդ /վարչ.բյուջե/ | 4891 | 12 771.167 | 12 771.167 | | | | | 12 771.167 |

| Տողի NN | *Բյուջեի եկամուտները* | Հոդվածի NN | ընդամենը | վարչական | Ֆոնդային |
|---|---|---|---|---|---|
| | ԸՆԴԱՄԵՆԸ | | 6 306,858 | 771,167 | 5535,691 |
| 1380 | Կապիտալ ոչ պաշտոնական դրամաշնորհներ | 7442 | 5535,691 | | 5535,691 |
| 1370 | Ընթացիկ ոչ պաշտոնական դրամաշնորհներ | 7441 | 771,167 | 771,167 | |
| 1352 | Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ | 7422 | 3800,0 | 3800,0 | |
| 1353ա | Մանկապարտեզների ծնողական գումարներ | 7422 | -3800,0 | -3800,0 | |

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ
ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ Հ. ՄԻՐԶՈՅԱՆ

Հավելված N 2
Սպիտակ համայնքի ավագանու
2020 թվականի օգոստոսի թիվ ____ -Ն որոշման

ՀԱՄՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

| Տողի NN | Բաժին | Խումբ | Դաս | Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները | | Ընդամենը | Ավելացում | Պակասեցում | Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | | 6 | 7 | 9 | վարչական | ֆոնդային |
| 2000 | X | X | X | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ | | 0 | 52 771.167 | -52 771.167 | -52 771.167 | 52 771.167 |
| | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | |
| 3112 | 11 | 1 | 2 | *Պահուստային ֆոնդ/վարչական բյուջե/* | *4891* | -52 771.167 | | -52 771.167 | -52 771.167 | |
| 3112 | 11 | 1 | 2 | *Պահուստային ֆոնդ/ֆոնդային բյուջե/* | *4891* | 52 771.167 | -52 771.167 | | | -52 771.167 |

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ
ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ Հ. ՄԻՐԶՈՅԱՆ

Հավելված N 3
Սպիտակ համայնքի ավագանու
2020 թվականի օգոստոսի____ թիվ -Ն որոշման

հազ. դրամ

| Տողի NN | Բաժին | Խումբ | Դաս | Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները | | Ընդամենը | Ավելացում | Պակասեցում | Տնտեսական հարաբերություններ /ճանապարհային տրանսպորտ/ | Նախադպրոցական կրթություն սարքեր և սարքա | Շրջակա միջավայրի պաշտպանություն | Պահուստային միջոցներ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | | 6 | 7 | 9 | 10 | 11 | 12 | 13 |
| 2000 | X | X | X | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ | | 0 | 22 441.167 | -22 441.167 | 21 000.0 | 771.167 | 670.0 | -22 441.167 |
| | 4 | 5 | 1 | *Շենքերի և շինությունների կառուցում* | 5112 | 14 200.0 | 14 200.0 | | 14 200.0 | | | |
| | 4 | 5 | 1 | *Տրանսպորտային սարքավորումներ* | 5121 | 7 470.0 | 7 470.0 | | 6800.0 | | 670.0 | |
| | | | | *Այլ վարչական սարքավորումներ* | 5122 | 771.167 | 771.167 | | | 771.167 | | |
| 3112 | 11 | 1 | 2 | *Պահուստային ֆոնդ/ֆոնդային բյուջե/* | *4891* | -22 441.167 | | -22 441.167 | | | | 30 330.0 |

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ Հ. ՄԻՐԶՈՅԱՆ

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ «ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի ԹԻՎ 69-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

*ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԽՆԴՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ*

Սպիտակ համայնքի ավագանու «Սպիտակ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 69-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» որոշման նախագծի ընդունումը պայմանավորված է.

Սպիտակ համայնքի 2020 թվականի բյուջեով չնախատեսված եկամուտների և ծախսերի փոփոխության անհրաժեշտությամբ:

*ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԸ*

1. 2019 թվականի մարտի 9-ի փոխադարձ հաշվարկների վերաբերյալ ակտի համաձայն՝ Սպիտակ համայնքը 2019 թվականի դեկտեմբերի 18-ի դրությամբ «Վերականգնվող էներգիայի և էներգիայի արդյունավետ օգտագործման հնարավորությունը Վայք և Սպիտակ քաղաքներում» ծրագրի շրջանակներում Սպիտակ համայնքը հավելյալ ֆինանսավորել է 5 535 690,7 ՀՀ դրամ, որը «Հաբիթաթ ֆոր Հյումենիթի Արմենիա» հիմնադրամի կողմից ենթակա է հետ վճարման Սպիտակ համայնքի բյուջե: Նախատեսվում է նշված գումարն ուղղել Սպիտակ համայնքի բյուջեի ֆոնդային մասի պահուստային ֆոնդ:

2. 2020 թվականի հունիսի 25-ին կնքված պայմանագրի համաձայն՝ Վիշեգրադի միջազգային հիմնադրամը Սպիտակ համայնքին տրամադրում է 771 167 ՀՀ դրամ գումար՝ ջերմաչափ, լողասենյակի սենսորային ծորակներ, ձեռք չորացնելու սարք: Նախատեսվում է նշված գումարն ուղղել Սպիտակ համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդ:

3. Հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետությունում նոր կորոնավիրուսային հիվանդության հետևանքով առաջացած համավարակի պատճառով Սպիտակ համայնքի ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատությունների գործունեությունը ժամանակավորապես դադարեցվել է՝ նախատեսվում է Սպիտակ համայնքի 2020 թվականի բյուջեի եկամտային մասում նվազեցնել համայնքային ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատությունների ծառայություններից օգտվողների համար սահմանված տեղական վճարները 3 800 000 ՀՀ դրամի չափով, իսկ համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների

օրինականացման համար սահմանված վճարները ավելացնել 3 800 000 ՀՀ դրամի չափով:

4. Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմում թափուր հաստիքների առկայությամբ պայմանավորված՝ Սպիտակ համայնքի 2020 թվականի բյուջեի «Գործադիր և օրենսդիր մարմիններ» գործառական դասակարգման «Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարներ» տնտեսագիտական դասակարգման 4111 հոդվածում տնտեսված գումարներից նախատեսվում է ուղղել.

ա) 200 000 ՀՀ դրամ՝ «Գործադիր և օրենսդիր մարմիններ» գործառական դասակարգման «Հատուկ նպատակային այլ նյութեր» տնտեսագիտական դասակարգման 4269 հոդված,

բ) 100 000 ՀՀ դրամ՝ «Գործադիր և օրենսդիր մարմիններ» գործառական դասակարգման «Կենցաղային և հանրային սննդի նյութեր» տնտեսագիտական դասակարգման 4267 հոդված,

գ) 6 900 000 ՀՀ դրամ՝ բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդ:

5. Հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետությունում նոր կորոնավիրուսային հիվանդության հետևանքով առաջացած համավարակի պատճառով Սպիտակ համայնքի ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատությունների գործունեությունը ժամանակավորապես դադարեցվել է, բյուջեի ծախսային մասում առկա են տնտեսումներ, որոնցից նախատեսվում է նվազեցնել 6 000 000 ՀՀ դրամ, որից.

ա) 900 000 ՀՀ դրամն ուղղել բյուջեի «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ» գործառական դասակարգման «Մասնագիտական ծառայություններ» տնտեսագիտական դասակարգման 4241 հոդված,

բ) 5 100 000 ՀՀ դրամն ուղղել բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդ:

6. Նախատեսվում է Սպիտակ համայնքի 2020 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից ֆոնդային մաս ուղղել 52 771 167 ՀՀ դրամ.

ա) 14 200 000 ՀՀ դրամ՝ «Ճանապարհային տրանսպորտ» գործառական դասակարգման «Շենքեր և շինությունների կառուցում» տնտեսագիտական դասակարգման 5112 հոդված,

բ) 6 800 000 ՀՀ դրամ՝ «Ճանապարհային տրանսպորտ» գործառական դասակարգման «Տրանսպորտային սարքավորումներ» տնտեսագիտական դասակարգման 5121 հոդված,

գ) 670 000 ՀՀ դրամ՝ «Շրջակա միջավայրի պաշտպանություն» գործառական դասակարգման «Տրանսպորտային սարքավորումներ» տնտեսագիտական դասակարգման 5121 հոդված,

դ) 771 167 ՀՀ դրամ՝ «Նախադպրոցական կրթություն, սարքեր և սարքավորումներ» գործառական դասակարգման «Այլ վարչական սարքավորումներ» տնտեսագիտական դասակարգման 5122 հոդված,

ե) 30 330 000 ՀՀ դրամ՝ բյուջեի ֆոնդայի մասի պահուստային ֆոնդ:

*ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ*

Որոշման նախագծի ընդունման նպատակն է.

Սպիտակ համայնքի 2020 թվականի բյուջեում կատարել չնախատեսված եկամուտների և ծախսերի փոփոխություններ:

*ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔԸ*

Որոշման նախագծի ընդունման արդյունքում հնարավոր կլինի իրականացնել 2020 թվականի բյուջեով նախատեսված ծրագրերը:

*ԱԿՏԻ ՆՈՐՄԱՏԻՎ ԲՆՈՒՅԹԻ ՀԻՄՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ*

Ընդունվող ակտը նորմատիվ բնույթի իրավական ակտ է, քանի որ, համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի» մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, պարունակում է վարքագծի պարտադիր կանոններ անորոշ թվով անձանց համար և փոփոխություն է կատարվում նորմատիվ բնույթի իրավական ակտում:

Սույն որոշման նախագծի մշակման գործընթացում ներգրավված ստորաբաժանումներն ու անձինք են.

Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժին:

# ՏԵՂԵԿԱՆՔ

## ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ «ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի ԹԻՎ 69-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԱՎԵԼԱՑՈՒՄՆԵՐԻ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Սպիտակ համայնքի ավագանու «Սպիտակ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 69-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» որոշման նախագծի ընդունվելու դեպքում Սպիտակ համայնքի 2020 թվականի բյուջեում նախատեսվում են եկամուտների և ծախսերի ավելացումներ:

# ՏԵՂԵԿԱՆՔ

## ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ «ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի ԹԻՎ 69-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սպիտակ համայնքի ավագանու «Սպիտակ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 69-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» որոշման նախագիծն ընդունվելու դեպքում այլ իրավական ակտեր ընդունելու կամ իրավական ակտերում փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում: